

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 269-Ա


1 սեպտեմբերի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 14-ի N 1996-Ա, 2020 թվականի օգոստոսի 19-ի N 2031-Ա, N 2034-Ա, N 2066-Ա, N 2074-Ա, N 2089-Ա, հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 28-ին, 30-ին, 31-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Լիլյա Մակինյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Անդրանիկի 125/3.
  - 2) «Նելլի Գասպարյան» Ա/Ձ՝ ք. Երևան, Անդրանիկի 129/14.
  - 3) «Մեժլումյան Էլմիրա» Ա/Ձ՝ ք. Արթիկ, Գ.Նժդեհի 1/2.
  - 4) «Շողիկ Ֆռանգյան» Ա/Ձ՝ ք. Արթիկ, Տոնականյան 1.
  - 5) «Ղազարյան Սանասար» Ա/Ձ՝ ք. Արթիկ, Բաղրամյան 18.
  - 6) «Զավեն Հայրիկյան» Ա/Ձ՝ ք. Սիսիան, փ. Որոտան 1/45 49 հողամաս:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

---

VERIFIED OCSP 01/09/20 18:15:46 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**